«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիր

«Արդյունավետ առաջնորդություն, արդյունավետ հաղորդակցություն, կոնֆլիկտների լուծում և շահերի վրա կառուցած բանակցություններ» թեմայով վերապատրաստող փորձագետի ծառայություններ մատուցելու հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

ք. Երևան **02.10.2023թ.**

Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՄԶՄԿ) 2022թ. հունիսից միացել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրին, որն իրականացնում է «Փրոջեքթ Հարմոնի Հայաստան» հասարակական կազմակերպության գլխավորած կոնսորցիումը, որի անդամներն են նաև ՄԶՄԿ-ն, Սիվիտաս Հայաստանը և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու ընդլայնել դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը:

Համակարգային փոփոխություններ իրականացնելուն ուղղված ՔՀԿ-ների և երիտասարդների կարողություններն ու հանձնառությունը զարգացնելու նպատակով ՄԶՄԿ-ն 2023-2026 թվականների ընթացքում նախատեսում է կազմակերպել 10 եռօրյա դասընթացներ՝ նախատեսված «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի 2-րդ բաղադրիչի շրջանակում ենթադրամաշնորհ ստացած քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Դասընթացի նպատակն է մասնակիցներին տրամադրել առաջնորդության, արդյունավետ հաղորդակցության, կոնֆլիկտների լուծման և շահերի վրա կառուցած բանակցությունների համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Դասընթացի շնորհիվ մասնակից կազմակերպությունները կկարողանան իրենց աշխատանքային միջավայրը և գործունեությունը դարձնել ավելի երիտասարդակենտրոն, երիտասարդներին ուղղված իրենց ներկա և ապագա ծրագրերում արդյունավետորեն ինտեգրել միջազգայնորեն լայն ճանաչում վայելող Երիտասարդների դրական զարգացման մեթոդաբանությունը, իսկ մասնակից երիտասարդները կբարելավեն իրենց նուրբ հմտությունները՝ իրենց հուզող հարցերի շուրջ համայնքային նախաձեռնություններ իրականացնելիս դրանք արդյունավետորեն կիրառելու և սահմանված նպատակներին ավելի դյուրին հասնելու համար: Դասընթացները կազմակերպվելու և իրականացվելու են Երևանում և ՀՀ մարզերում:

Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերի նպատակը

Բաղադրիչ 2-ի շրջանակներում «Փափուկ հմտություններ» թեմայով վերապատրաստման դասընթացների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով, ՄԶՄԿ-ն նախատեսում է ներգրավել վերապատրաստող փորձագետի (այսուհետ՝ Փորձագետ):

Վերը նշված ժամանակահատվածում վերապատրաստման դասընթացների համար նախատեսվող ջանքերի/օրերի առավելագույն քանակը կազմում է 70 օր:

Փորձագետը մասնակցելու, օժանդակելու և վարելու է դասընթացներ Ծրագրի վերապատրաստման և կարողությունների զարգացման մասնագետի՝ ծրագրային կոմպոնենտի համակարգողի հետ սերտ համագործակցությամբ:

Փորձագետը պետք է կատարի հետևյալ պարտականությունները.

- Մասնակիցների նախնական ուղորդում և առաջադրանքների տրամադրում,
- Օժանդակություն Ծրագրի վերապատրաստման և կարողությունների զարգացման մասնագետին դասընթացների կազմակերպման և անցկացման ընթացքում և վերապատրաստում,
- Օժանդակություն Ծրագրի վերապատրաստման և կարողությունների զարգացման մասնագետին վերապատրաստման դասընթացների նյութերի նախապատրաստման ընթացքում,
- Օժանդակություն Ծրագրի վերապատրաստման և կարողությունների զարգացման մասնագետին վերապատրաստման դասընթացի գնահատման հաշվետվության կազմման ընթացքում:

Ինստիտուցիոնալ կարգավորումներ և հաշվետվողականություն

Փորձագետը ծառայությունները մատուցելու է ծրագրային կոմպոնենտի համակարգողի հսկողության ներքո և հաշվետու է Ծրագրի տնօրենին:

Երևանից դուրս վերապատրաստման դասընթացներն իրականացվելու դեպքում ՄԶՄԿ-ն, Ծրագրի շրջանակներում, կապահովի Փորձագետի տրանսպորտային փոխադրումն ու գիշերակացը:

Փորձագետից պահանջվող որակները.

- Բարձրագույն կրթություն քաղաքական կամ հասարակական գիտությունների կամ հարակից ոլորտներում,
- «Արդյունավետ առաջնորդություն, արդյունավետ հաղորդակցություն, կոնֆլիկտների լուծում և շահերի վրա կառուցած բանակցություններ» թեմայով դասընթացների վարման առնվազն 15 տարվա փորձ,
- Հարվարդի բանակցային մեթոդով վերապատրաստման փորձ, և Հարվարդի բանակցային մեթոդի տիրապետում,
- Գործնական բանակցային հմտությունը կդիտարկվի որպես առավելություն:

Ինչպես դիմել

Հրավիրում ենք հետաքրքրված ֆիզիկական անձանց (անհատ ձեռներեցներին (Ա/Ձ)) ներկայացնել ծառայությունների մատուցելու հետաքրքրության հայտ:

Խնդրում ենք հայտում ներկայացնել հակիրճ տեղեկություններ փորձագետից պահանջվող որակների վերաբերյալ, կցել CV-ն, և տրամադրել կոնտակտային տվյալներ: Որպես անհատ ձեռներեց դիմելու դեպքում հայտում անհրաժեշտ է ներառել նաև Ա/Ձ անվանումը, հասցեն, պետական գրանցման տարեթիվն ու գրանցման համարը:

Առաջարկը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ agalstyan@ichd.org էլ.փոստի հասցին կամ առձեռն՝ Երևան, Սայաթ Նովա 19, բիզնես հարկ 18 սենյակ:

Առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է 2023թ. հոկտեմբերի 20-ը:

Գնահատում և ընտրություն

Հայտատուների փորձառությունն ու պահանջվող որոկավարումների համապատասխանությունը վերապատրաստող փորձագետի ծառայություններ մատուցելու հետաքրքրության հայտի պահանջներին կգնահատվի գնահատող հանձնաժողովի կողմից 1-ից 5 բալային համակարգով:

Գնահատման արդյունքում հայտատուների կարճ ցուցակում ընդգրկված անձինք կհրավիրվեն հարցազրույցի՝ ըստ հավաքած միավորների նվազման: Բարձր միավոր հավաքած հայտատուի կողմից առաջարկված գինը հանձնաժողովի կողմից ընդունելի համարվելուց հետո՝ հայտատուին կառաջարկվի կնքել վերապատրաստող փորձագետի ծառայությունների մատուցման պայմանագիր Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածով:

Գնահատող հանձնաժողովի կողմից երկու և ավելի հայտերը հավասար գնահատվելու դեպքում նախապատվությունը կտրվի ծառայությունների մատուցման նվազագույն գին առաջարկած հայտատուին:

Պարզաբանումների համար զանգահարել՝ 010-582638

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ